ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«10» ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով. ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2021թվականի հունիսի 10-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Սուբվենցիոն ծրագրի իրականացման գնման ձևի ընտրության մասին
2. Համայնքային սեփականություն համարվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասի համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«10» ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 28-Ա
ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՁԵՎԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների, ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնման ձևը համաձայն «Գնումների մասին» օրենքի համայնքի գնումների պլանով նախատեսվել է բաց մրցույթ, ըստ որի մրցույթի հրավերը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից մինչև պայմանագրի կնքման գործընթացը տևում է շուրջ 2 ամիս և հաշվի առնելով այդ ժամանակահատվածում եղանակային պայմանները և աշխատանքների տարաբնույթ լինելը, ***ավագանին որոշում է***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Գառնի համայնքի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների, ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնումը կատարել հրատապ բաց մրցույթի եղանակով, առաջարկելով նաև գնումների պլանում կատարելու համապատասխան փոփոխություններ:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Ղողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«10» ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 29-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունվարի 1-ի թիվ 186-Ն հրամանիպահանջներով, հիմք ընդունելով Գառնի համայնքի բնակիչ Գառնիկ Վարդանի Եփրեմյանի դիմումը Գառնի ձոր հատվածում գտնվող 07-021-0383-0013 կադաստրային ծածկագրով 0.497044 հա հողամասը իր կողմից 10 տարուց ավել անընդմեջ բացահայտ և բարեխղճորեն օգտագործելու պայմաններում ձեռքբերման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն օտարելու վերաբերյալ և այդ հողամասի նկատմամբ «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից 2020թվականի ապրիլի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքում գտնվող 0.497044 հա ջրային հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունքի հաստատող փաստաթուղթ, ***ավագանին որոշում է***

1. Գառնի համայնքային սեփականություն համարվող 07-021-0383-0013 ծածկագրով 0.497044 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել՝ ջրայինից գյուղատնտեսական նշանակության ֆոնդի հողեր՝ համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն որոշմամբ հաստատված Գառնի համայնքի գլխավոր հատակագծին:
2. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Գառնի համայնքում գտնվող 0.497044 մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան